

ՄԵԼԿ

Տարեկան գինը 10 ռուբլի. կէս տարեկան 6 ռուբլ.
Առանձին համարները 5 կոպէկով.

Թիֆլիսում գրվում են միմյանիս խմբագրատան մէջ.

Մեր հասցէն. Тифлисть, Редакция «Мпакъ».
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Տէլէֆոն № 253.

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 ժամ
(բացի կիրակի եւ տօն օրերէն).

Յայտարարութիւն ընդունվում է առանձին լիցիւզով.

Յայտարարութիւններ համար վճարում են
իրաւաբանի բառին 2 կոպէկ.
Տէլէֆոն № 253.

ՀԻՄՆԱԳԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Բարեգործութիւնից
փախչողներ. Անբարեգործութիւնից
փախչողներ. Մատենագրութիւն. Ներքին
ուրբեր. — ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ. Արտաքին
ուրբեր. — ԽԱՌԻ ԼՈՒՐԵՐ. Մանրանկար. —
ՀԵՌԱԳԻՐ. — ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ. —
ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ. Գարեգին Գ. Զարբանալեան.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԲԱՆԱՍԻՐՈՒԹԻՒՆԻՑ ՓԱՆՁՈՂՆԵՐ

Կտոր կտոր ամպ էր գալիս բարձր սարից.
Մէկ փեշատած գիր ստացաւ եւ իմ ետքից.

Կտոր կտոր ամպ էր գալիս...
Սարիցը չէր, որ կը դար ամպը, ետքիցս չէր
եւ գիրը...

Գիրը եկաւ Երեւանից եւ Երեւանի
Նոր-Նախիջևանում կայ մի համակրելի
հիմնարկութիւն — Բարեգործական հիմնարկու-
թիւն, որը ունի գեղեցիկ կանոնադրութիւն.
Նոր-Նախիջևանում կայ եւ մի ուրիշ հա-
մակրելի հիմնարկութիւն՝ Թեմական դպրանոց.
Հայ տղաքը ծարաւ են ուսման եւ շատ են
ցանկացողները մտնել դպրանոց, բայց, ախտա,
դպրանոցի չէք ուղարկել է:

Եւ Նոր-Նախիջևանի Բարեգործական ըն-
կերութիւնը շատագուտ է օգնել, բայց նրա մի-
ջոցները եւս սուղ են:
Ի՞նչ անենք:

Մենք դիմում ենք անխտիր բոլոր հարուստ-
ներին, աղաչելով օգնել այդ փեմ գործին:

Դիմեցինք Արմաւիր երկու հարուստներին.
մինը, Մ. Ա. Թորոսեան, չնորհակալ ենք, ըն-
դունել մեր հրաւերը եւ ուղարկել մեզ իր
լուսման, իսկ միւսը... միւսը... լռեց. այժմ
միւսի մասին:

Մենք դիմեցինք եւ Եկատերինօզար:
Եւ ահա՛

Կտոր կտոր ամպ էր գալիս, կայծակ էլ հետը,
եւ ո՞վ էր սպասում, կարծում... Եկատերինօ-
զարիցը... Փոխանակ մերթելու մեր առաջար-
կութիւնը, մեզ կշտամբում են: Պարոնները
ցանկանում են, որ ողջ մեր ընկերութիւնը
գիտնայ իրանց կարծիքը մեր մասին: Երեւի
այդ երկու պարոններին ցանկութիւնները մենք
կատարած կը լինենք լիովին, եթէ տպենք նը-
րանց նամակը: Թող բոլոր մեր հասարակու-

թիւնը իմանայ եւ դատէ: Մենք ուրախու-
թեամբ խոնարհվում ենք մեր հասարակական
կարծիքի առաջ:

«Մենք շատ քաջ դիտենք, — ասում են եր-
կու պարոնները, — թէ ինչ նշանակութիւն ու-
նեն ներկայումս թեմական դպրոցները եւ բա-
րեգործութիւնից փախչողները: Ինչու չէ, որ
չենք, բայց երբ մի բարեգործութիւն առա-
ջարկում են առանց մեր համաձայնու-
թիւնը հարցնելու, մանաւանդ երբ առա-
ջարկողները ուսման լրագիրներն էլ չեն
պատկզնիք եւ գրում իրանց առաջար-
կութիւնը մերթողների դէմ, մենք, կամենալով
պահպանել մեր իրաւունքը ինքնուրոյն եւ ոչ
ուրիշից, այսպիսով բարեգործել, մանաւանդ
պատկզնիք չենք կնքում ինչպէս եւս հա-
տառելու համար, պարտաւորված եղանք այդ-
պէս վարվել»:

«Լրագիրները» — «Մշակ» է:
Ոմանք — եւ, ձեր խոնարհ ծառան:
Հասկացա՞ք: Ո՞չ:

Թիւնը էք մեր յօդուածը՝ «Շոյալութեամբ
եւ մարտիկ նորին»: Նկարագրված էր մի չը-
ռայլ հարսանիք: Հազարներ վաճառված էին է-
լեգորական լոյսի, հարկերներ — վարուցանքի
համար, եւ այդ իսկ մեծ խնջոյքին հարուստ ա-
ղան մերթեց հարկեր բուրլի յօդուած Նոր-Նա-
խիջևանի հայուհեաց խնամատար ընկերու-
թեան: Մենք ասում էինք, որ չոր եւ դառն է
այն հացը, որ երբեմն հարուստ մեծատունը
չպրտում է խեղճի առաջ, մենք ասում էինք,
որ այդ հացով կարելի է աւելի հեշտ խեղճել
քան թէ կերակրել...

Ընդ չէինք մենք ասում, թէ ոչ:
Եւ եթէ ձիւր, մենք ոչինչ չունենք, որ
ձեռագիր ցրտին դուք անուշ անէք ձեր թանգ-
վարունքը, բայց մի յանդգնէք ասելու եւ գրե-
լու, որ մենք պատկզնիք ենք գրում, որովհետեւ
եթէ դուք կրկնէք, պիտէ՞ք այդ, դուք խոստո-
վանա՞ծ կը լինէք, որ ձեր խնջոյքը մեր կեանքի
պատկզնիք է, քանի որ մեր գրածը դուք ճշ-
մարտութիւն է:

Մենք ձեր ընտանեկան կեանքի հետ գործ-
չունենք, մենք ձեր ընտանեկան կեանքը
չօչափա՞ծ չենք, նկարագրած չենք: Բայց մեր-
ժեկ բարեգործական ընկերութեան առաջար-
կութիւնը օգնել թշուառին, լքեալին, կարօ-
տեալին, միթէ՞ դա ձեր ընտանեկան գործն է,

ուսումնական կեանքի վերաբերմամբ եւ որին
միշտ յիշելի է եղել առանձին երախտագիտու-
թեամբ:

«Բազմավէպ»-ի խմբագրութիւնը, յիշելով
միաբանութեան կրած ծանր կորուստը, գլխա-
ւորապէս կանգ է առնում հանգուցեալ վար-
դապետի ընտանորդութեան վրա եւ նկարագրում
է նրա ընտրող յատկութիւնները. հնազանդու-
թիւն, խոնամութիւն, սկարին ու կարօտին օգ-
նելու մշտական պարտաստութիւն, որ հասնում
էր մինչեւ անձնագործութեան, վերին աստիճանի
համեստութիւն, աշխատասիրութիւն — սրանք
են եղել այն առաքելութիւնները, որոնցով
փայլել է հանգուցեալ իր վարած բոլոր պաշ-
տօններում թէ՛ Միսիթարեան վանքում եւ թէ՛
վանքից դուրս:

Ի հարկէ, «Բազմավէպ»-ի համար շատ ընա-
կան է յիշել եւ յիշեցնել միաբանութեան ծե-
րունի անդամի այս հոգեկան բարեմասնու-
թիւնները (որոնք, ի դէպ, ասենք, շատ թէ
քիչ չափով յատուկ են առ հասարակ բոլոր
Միսիթարեաններին), քանի որ Զարբանա-
լեանը տառեկալ տարիներով ապրել է այդ
միաբանութեան մէջ. նրան, իբրեւ կենդանի
մարդու, տեսել, նրա հետ գործ են ունեցել
միաբանակից անդամները. ուրեմն նրանցից
պակասում է մի կենդանի մարդ, իրանց ծե-
րունի հայր սուրբը, որ յիտուն տարի շարու-
նակ նրանց հետ է եղել, նրանց հետ աշխատել,
նրանց վշտերին եւ ուրախութիւններին մաս-
նակցել: Մեզ համար՝ Գար. Գ. Զարբանալեանը
եղել է լոկ իբրեւ գրականութեամբ պարագոյ

միթէ՞ դա հասարակական հարց եւ խնդիր չէ:
Այժմ դուք, պարոններ, մերժում էք մեզ,
որովհետեւ մենք պատկզնիք ենք գրել:

Լաւ, ընդունենք:
Ապա առաջ ինչո՞ւ դուք մերթեցիք հա-
յուհեաց ընկերութեան:

Որովհետեւ ձեր համաձայնութիւնը հարցաձ-
գէին Նոր-Նախիջևանի կանայք: Որովհետեւ
դուք կամենում էիք պահպանել ձեր իրաւունքը
ինքնուրոյն եւ ոչ ուրիշից, այսպիսով բարե-
գործել: Այո՛:

Ուրեմն ներկայի է արեւօք անհանգիստ անել
ձեզ, արմաւիրցի եւ եկատերինօզարցի աղա-
ներ, — եթէ դուք իրաւ, որ «բարեգործութիւնից
փախչողները չէք» — եւ հարցնել, որ օրվայ եւ
մինչեւ երբ դուք պիտի պահպանէք «ձեր ի-
րաւունքը ինքնուրոյն եւ ոչ ուրիշից, այսպիսով
բարեգործել»: Ներկայի է արեւօք խոնար-
հաբար խնդրել եւ աղաչել ձեզ, որ վերապէս
ցած իջնէք բարձր ապկերից, մտնէք մեր խեղճ
ժողովրդի խաւերի մէջ, չօչափէք նրա վերքե-
րը, ցաւերը եւ դարմանէք:

Միթէ՞ դուք չը դիտէք ինչ սոսկալի աղէտ է
պատահել Կովկասում, հեռու Ախալքալաքում,
մեր արեւակից եղբայրների գլխին: Միջատներից
փառվել են խեղճերը: Կարիքը, սուր կերպա-
րանք ստացած, ձկուտ է, արորում, խեղճում
գիւղացուն: Քաջից, ծարաւից մեռնում են
նրանք այնտեղ եւ թոյլ, տկար ձեռքերը պար-
զում են մեզ եւ, աղի արտաւորված անզօր աչե-
րին, սպասում են, սպասում են միշտ մեր օգ-
նութեան:

Օգնեցէ՛ք, օգնեցէ՛ք, ի մեր Աստուծոյ, չը
սպասած, որ ձեզանից կը խնդրեն, ձեզ կա-
ռաջարկեն, կը ցանկանան իմանալ ձեր համա-
ձայնութիւնը: Օգնեցէ՛ք, նրանք գրած չեն
պատկզնիք, նրանք չը գիտեն գրել, ողորմե-
լիները, նրանք միայն գիտեն մեռնել, մեռնել
ինչպէս մի օր պիտի մեռնենք բոլորս, անխտիր
թէ հարուստներս, թէ աղքատներս, մեռնենք
եւ գանք, կանգնենք մեր Աստուծոյ առաջ մերկ,
սկզբի եւ բոքի, առանց մեր սովորական սարուկ-
ների, ծառանքի եւ անձնավաճառ պնակալէզ-
ների եւ առանց այն դարձելի ոսկուն, որ ստո-
րացնում է, ցածացնում է ամեն բան, որի հետ
կապում է, չիփում է, եւ որը սակայն այնչափ
հեշտ եւ այնչափ լայն բացում է մեր առաջ
կեանքի ունայնութեան, զուարճութեան եւ ու-
րախութեան բոլոր դռները...

մարդ եւ իբրեւ այսպիսի գործիչ նա անուն է
թողել հայ բանասիրութեան պատմութեան մէջ:
Ծանօթանա՞ք նրա գրական գործունէու-
թեան հետ:

Նրա առաջին աշխատութիւնը, որ լոյս տե-
սաւ 1856-ին է «Պատմութիւն մատենագրու-
թեան Յունաց, Հռոմէականաց եւ հարց եկե-
ղեցոյ»: Սրան իբրեւ շարունակութիւն կարելի
է համարել նրա «Պատմութիւն մատենագրու-
թեան միջին եւ նոր դարերը յԱրեւմուտ»
երկհատոր աշխատութիւնը, որ տպւեց 1874-ին:
Այս գործերը, լինելով հայերէն լեզուով միակ
սխտանական ձեռնարկները, օտար աղքերի հին
եւ նոր մատենագրութեան հետ ծանօթանալու,
անշուշտ ծառայութիւն են մատուցել հայ հա-
տարակութեան, թէ՛ եւ զերծ չեն եւ խոշոր թե-
րութիւններից, լինելով մի հոգեւորականի, այն
էլ կաթոլիկ վանականի կրօնական ուղղութեան
եւ դաւանանքի արտադրութիւն: Բայց սրանք,
իրանց արժանաւորութիւններով ու թերու-
թիւններով հանդերձ, երկրորդական տեղ են
ընունում Գ. Զարբանալեանի գրական գործու-
նէութեան մէջ: Նա արդիւնաւոր եղաւ եւ
անուն վաստակեց գլխաւորապէս՝ հայոց մա-
տենագրութեան նուիրված իր աշխատութիւն-
ներով:

Մինչեւ 1865 թվականը հայոց հին մատենա-
գրութիւնը դուրի էր մի կատարեալ սխտանա-
կան պատմութիւնից, գոյութիւն ունէր Սուր.
Սոմալի խաւերէն լեզուով 1829-ին տպւած մի
համառոտութիւնը այս նիւթին վերաբերեալ, եւ
Նեյմանի 1836-ին գերմաներէն տպւած փորձը

Եւ եթէ դուք, արմաւիրցի եւ եկատերինօ-
զարցի աղաներ, կօչնէք այդ խեղճերին, կօչ-
նէք այնչափ, ինչքան դուք պարտական էք
եւ կարող էք, հաւատալէք, եւս առաջինը կը
խոնարհեմ իմ գլուխը ձեր առաջ եւ հրազա-
րակով կասեմ ձեզ՝

Մեղայ, մեղայ եւ մեղայ...

Բայց քանի որ դուք խուլ էք դէպի Ախալ-
քալաքի լացը եւ պաղատանքը, քանի որ դուք
միայն «պահպանում էք ձեր իրաւունքը ինք-
նուրոյն եւ ոչ ուրիշից, այսպիսով բարեգոր-
ծել», քանի որ մինք չը գիտենք երբ կը գայ
ձեր քէֆը ձեր իրաւունքը իրաւունքով, թոյլ
տուէ՛ք մեզ կարծելու, որ դուք, այն, որ դուք
իսկ եւ իսկ բարեգործութիւնից փախչողնե-
րիցը էք եւ էք...

Գր. Զախաւեան

ԱՆԲԵՐՈՒԹԻՒՆԻՑ ՎՆԱՍՎԱՆՆԵՐԻ ՕԳՏԻՆ

Ախալքալաքի գաւառի անբարեգործութիւնից
փախչողների օգտին ստացանք հետեւեալ նոր
նուիրատուութիւնները. Թիֆլիս բժ. Կ. Գո-
չարեանից 5 ռուբլի: Բոստօմ Մ. Մալլը-
մանից 3 ռուբլի: Կուրտուկ Պ. Զախարեա-
նից 10 ռուբլի: Բագու Գ. Կոստանեանից
5 ռուբլի: Բալախանի Յ. Տէր-Յակո-
բեանի նախարկութեան ցարդական ընկերութեան
մէջ ծառայողներից 90 ռ. 53 կոպէկ, որ ժո-
ղովրդած է հետեւեալ անձներից. Տ. Բ. Ստեփա-
նեանց եւ Խ. Սիւրյանց 5-ական ռուբլի. Ն.
Տէր-Յովհաննէսեանց, Գ. Աղամանց եւ Շ.
Տրոպե 3-ական ռուբլի. Լ. Բէգնազարեանց, Հ.
Սաֆարեանց, Յ. Աւետիսեանց, Ս. Եսայեանց, Գ.
Անդրեասեանց, Յ. Յակոբեանց եւ Յ. Բախու-
դարեանց 2-ական ռուբլի. Ա. Կարապետեան
1 ռ. 75 կ., Բ. Տոմոնով 1 ռ. 40 կ., Ա.
Նաւասարդեանց, Ս. Բէլուսեանց, Ն. Բաղ-
դասարեանց, Մ. Բաղդասարեանց, Ս. Բալա-
խանց, Բ. Սաֆարեանց, Դ. Պետրոսեանց, Մ.
Մկրտումեանց, Ա. Բուրխանեանց, Ա. Մե-
լքոնեանց, Մ. Տէր-Յովհաննէսեանց, Մ. Պողոսեանց, Մ.
Միքայէլեանց, Յ. Յարութեանց, Մ. Աւե-
տիսեանց, Մ. Թիւրքաբաշեանց, Մ. Մայի-
լեանց, Մ. Եսայեանց, Յ. Աւետիսեանց, Մ.
Ն. Տէր-Յովհաննէսեանց, Մ. Արդուսեանց,
Ա. Տէր-Վարդանեանց, Ա. Նահապետեանց, Մ.
Զախարեանց եւ Բ. Սիւրյանց 1-ական ռուբ-
լի. Դ. Իսրայէլեանց, Հ. Սարգսեանց, Դ. Յա-

հայոց մատենագրութեան պատմութեան, որ նա
կազմել էր առաջինի հետեւողութեամբ: Բայց
այս երկու աշխատութիւնները, բացի այն որ
օտար լեզուներով էին եւ միայն քերական մաս-
նիկ, շատ համառօտ էին, թերի եւ շատ հա-
ցած: Հայոց հին եւ նոր մատենագրութեան մի
լիակատար պատմութիւն գրելու առաջին փորձը
արաւ հանգուցեալ Գար. Զարբանալեանը, եւ
այս պատիւը ընդ միշտ նրան է պատկանում:

1865 թվին լոյս տեսաւ նրա «Պատմութիւն
հայերէն գրչութեան» ընդարձակ աշխատու-
թիւնը, աշխարհաբար լեզուով, յարմարեցրած
իրեւ զասագիրը գործածելու: Սա պարունա-
կում էր մեր հին մատենագրութեան պատմու-
թիւնը՝ սկզբնաւորութիւնից մինչեւ 13-րդ
դարը, կամ այսպէս ասած՝ կապիկական շրջանը:
Այնքան մեծ էր կարեւորութիւնը այսպիսի աշ-
խատութեան, եւ այնպիսի ընդունելութիւն
գտաւ սա հայ հասարակութեան կողմից, որ
այնուհետեւ երկու անգամ էլ տպագրվեց —
1886-ին՝ փոփոխված եւ աւելացրած, եւ
1897-ին, մի քանի անհայտ յաւելումներով:
1878-ին նա տպագրեց այս աշխատութեան
երկրորդ մասը — «Պատմութիւն հայերէն նոր
գրչութեան», որի նիւթն է կազմում հայոց
մատենագրութիւնը 14-րդից մինչեւ 18-րդ դա-
րը: Այս երկրորդ հատորը առաջինից համառօտ
է եւ համեմատաբար նուազ է մշակված, ինչպէս
սա հասարակ նուազ է մշակված եւ մեր այս
միջնադարեան մատենագրութիւնը:

Այս աշխատութիւնը, մանաւանդ նրա առա-
ջին հատորը, կարելի է ասել՝ նոր դարադրու

Ստ. Մալխասեանց

